



**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԳԻՒՑԱԶՆԱՄԱՐՏԻ 1500-ԱՄԵԱԿԻ
ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆՑ**

Յերկրանով կը ծանուցանենք մասնաւորապէս Սաղիմանայ հասարակութեան եւ Սփիւռքի համայն մեր սիրեցեալ ազգակիցներուն թէ հակառակ Ս. Քաղաքի բաղաձայն եւ ճշմարտական աննպաստ պայմաններուն, ընդառաջելով Ն. Ս. Օժուրին Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Սրբազնագոյն եւ Վեհափառ Կաթողիկոսին հայրապետական բարձր հրահանգին, Ս. Արուստյա Դեր. Տեղապահ Ս. Հօր եւ Պատ. Տնօրէն Ժողովի որոշումով, մեծ հանդիսութեամբ պիտի կատարուին Ս. Վարդանանց Դիւցազնամարտի 1500-ամեակի փառման հանդիսութիւնները, թէ Ս. Յակոբեանց Մայրավանդէն ներս եւ թէ Տնօրինական Սրբատեղեաց մէջ ըստ հետեւեալ ժամանակացոյցի:

Ա. — Հանդիսութիւններ Ս. Յարութեան Տաճարէն ներս. — 16 Փետր. Շաբաթ, յէս-միջօրէի ժամը 2.30-ին «Հրաւափառ»-ով հանդիսաւոր մուտք Ս. Յարութեան Տաճարէն ներս, եւ երեկոյեան ժամերգութիւն Բ. Գողգորայի մեր մատուին մէջ: Ապա երեկոյեան քափօր-այցելութիւն Ս. Տեղեաց: — 17 Փետր. Կիրակի, առաւօտեան ժամը 5.30-ին հանդիսաւոր մուտք Ս. Յարութեան Տաճարէն ներս, եւ առաւօտեան ժամերգութիւն Բ. Գողգորայի մեր մատուին մէջ: Իսկ ժամը 8.45-ին հանդիսաւոր Ս. Պատարագ Քրիստոսի Ս. Դերեզմանին վրայ, եւ ապա մեծահանդէս քափօր Քրիստոսի Ս. Դերեզմանին շուրջ:

Բ. — Հանդիսութիւններ Բեթղեմէմի Ս. Ծննդեան տաճարէն ներս. — 24 Փետր. Կիրակի, կէսօրէ առաջ ժամը 8-ին հանդիսաւոր երբ դէպի Բեթղեմէմ. — ժամը 9-ին «Հրաւափառ»-ով մեծահանդէս մուտք Ս. Ծննդեան տաճարէն ներս եւ ապա հանդիսաւոր Ս. Պատարագ Ս. Ծննդեան տեղւոյն վրայ: Յետ Ս. Պատարագի քափօրով ելք դէպի Ս. Ծննդեան մեր վանք:

Գ. — Հանդիսութիւններ Դեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարէն ներս. — 26 Փետր. Ներսիսեան, կէսօրէ առաջ ժամը 7.45-ին հանդիսաւոր երբ դէպի Ս. Աստուածածնին. — ժամը 8.30-ին «Հրաւափառ»-ով մուտք Ս. Աստուածածնայ տաճարէն ներս: Իսկ ժամը 9-ին հանդիսաւոր Ս. Պատարագ՝ Ս. Կուսի գերեզմանին վրայ:

Դ. — Հանդիսութիւններ Ս. Յակոբեանց Մայրավանդէն ներս. — 27 Փետր. Չորեքշաբթի, յէս-միջօրէի ժամը 2.30-ին երեկոյեան ժամերգութիւն եւ Ս. Վարդանանց նախասօնակ՝ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: — 28 Փետր. Հինգշաբթի, ժամը 5.30-ին առաւօտեան ժամերգութիւն եւ 8-ին հանդիսաւոր Ս. Պատարագ՝ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, եւ ապա հոգեհանգիստ Ս. Վարդանանց դիւցազնամարտի նահապետներու հոգւոյն ի հանգիստ: — Յետ-միջօրէի ժամը 3.30-ին Ս. Վարդանանց յիշատակի հանդէս Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

Ս. Մարտիրոսներուն աղօթովը Ամենակալը բոլոր զօրացնէ սիրոյ ու համեմատութեան ոգին մեր սիրելի ժողովուրդին բոլոր անհասներուն ու խաւերուն միջեւ, ու բոլոր պահեքաւան ու ամբողջ Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցին ու Հայուն Հայրենիքը:

12 Փետր. 1952

ԴԻԻԱՆ

Ս. Յակոբեանց Մայրավանդ — Երուսաղէմ

ԱՌԱՔ. ԱԹՈՌՈՅՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ